

## ԿԱՐԾԻՔ

**Քրիստինա Արսենի Խառատյանի <<Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում>> ԺԳ.00.03 <<Հատուկ մանկավարժություն>> (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Գիտական մտքի զարգացման խթանը հիմնախնդիրն է: Իսկ ժամանակակից բժշկության, մանկավարժության և հոգեբանության ոլորտում վերջին երեսուն տարվա ընթացքում բուռն կերպով շրջանառվում է մի հիմնախնդիր, որը վերաբերում է հոգեոչափաբանական զարգացման այնպիսի խանգարման, որը բնորոշվում է բազմաթիվ տեսակներով և անվանումներով՝ <<Պերվազիվ խանգարում>>, <<Աուտիզմի սպեկտր>>, <<Աուտիզմ>>, <<Վաղ մանկական աուտիզմ>>, <<Աուտիզմի համախտանիշ>> և այլն: Ասվածից հետևում է, որ այս հարցը, չնայած իր բազմաոլորտային հիմնախնդիր լինելու հանգամանքի, այնուամենայնիվ մնում է դեռևս չբացահայտված և գիտության համար խորը հետաքրքրություն ներկայացնող հարց: Ք.Ա. Խառատյանի կողմից ներկայացված գիտահետազոտական աշխատանքը բացառություն չէ նմանատիպ ուսումնասիրությունների շարքում, պարզապես այն վերաբերում է մի այնպիսի կարևոր հիմնահարցի, որը արժարժում է աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների լոգոպեդական աջակցության համակարգում վաղ միջամտության մոդելի ներդրման անհրաժեշտությունը: Ատենախոսը հավաստում է, որ հետազոտությունը կառուցվել և իրականացվել է՝ հաշվի առնելով բժշկահոգեբանամանկավարժական միջմասնագիտական ոլորտի առանձնահատկությունները՝ սույն համախտանիշի հաղթահարման տեսանկյունից:

Ըստ մեզ՝ այս հանագմանքը խիստ բարձրացնում է ներկայացված հետազոտության արժեքն այն առումով, որ լոգոպեդական աջակցության արդյունավետության բարձրացման հիմքում դրվում է օրգանիզմի և անձի հոգեոչափաբանական մեխանիզմների բնական խթանումը, ինչպես նաև երեխայի պահպանված ներուժի ակտիվացման սենզիտիվ շրջանների հաշվառման կարևոր սկզբունքը: Ատենախոսի այն փաստարկը, որ հաղորդակցական և խոսքային կարողություններին տիրապետելը անհրաժեշտ, սակայն բավարա չէ այս կազմի երեխաների լիարժեք սոցիալականացման համար, ևս փաստում են լոգոպեդական մոդելի ստեղծման անհրաժեշտության մասին, որը նախատեսվում է ներդնել լոգոպեդական

աջակցության գործընթաց՝ վաղ տարիքից: Սույն հայեցակետը թույլ է տալիս հաստատել, որ Ք.Ա. Խառատյանի <<**Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում**>> թեմայով գիտահետազոտական աշխատանքը արդիական հետազոտություն է, որն ըստ մեզ, հնարավորություն է տալիս բացահայտել այս ժամանակահունչ և հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդրի հաղթահարման ուղիները: Ներկայացված գիտահետազոտական աշխատանքի վելուծությունը նաև ցույց է տալիս, որ Ք.Ա. Խառատյանին հաջողվել է մշակել և պատշաճ գիտական ոճով ներկայացնել հետազոտության գիտական կառուցվածքը: Ելնելով թեմայի արդիականությունից՝ Ք. Ա. Խառատյանը **նպատակ է համարել** աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդելի մշակումը: Դրված նպատակից բխած խնդիրները ատենախոսը ներկայացրել է բարձր մակարդակով, աստիճանականության սկզբունքով, որոնց իրականացման համար ընտրել է հետազոտության **համապատասխան մեթոդներ**:

Ելնելով հետազոտության խնդրո առարկայից՝ աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառման մեթոդներն ու միջոցները ատենախոսը դիտարկել է որպես **հետազոտության առարկա**: Հետաքրքրության է արժանի ատենախոսի հատկապես այն **ենթադրությունը**, որ ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման ձևավորման, զարգացման աշխատանքներն առավել արդյունավետ կարող են կազմակերպվել, եթե լոգոպեդական վաղ միջամտության գործընթացում կիրառվի լոգոպեդական վաղ միջամտության հիմնավոր մեթոդների ու միջոցների համակարգային և կիրառական մոդել, որը կներառի աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր: Աշխատանքի վերլուծական տվյալների համաձայն՝ հետազոտության **գիտական նորույթը** սահմանվել է երեք ուղղությամբ. դրանցում առանձնապես արժևորում ենք այն, որ առաջին անգամ սահմանվել են այս համակազմի երեխաների լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման հիմնական ուղղությունները, բնույթը, բովանդակությունը և մշակվել է աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել. այն ներառում է աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր: Կատարված հետազոտության հիմքում ընկած են այն հիմնական **դրույթները**, որ՝ ա) աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն

ուղղված համակարգային մոդելը ներառում է գործնական մեթոդներ և միջոցներ, սոցիալական հարմարվողականության համալիր ծրագիր բ) մասնագիտացված հաստատություններում իրականացված ուսումնական գնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիրը, գ) լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառումը նպաստում է աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների ներգրավմանը սոցիալական միջավայր՝ ընդլայնելով նրանց խոսքայի և հաղորդակցական ներուժը:

Այսպիսով, կատարված գիտահետազոտական աշխատանքի վերլուծությունը թույլ է տալիս հաստատել, որ այն կառուցված է համապատասխան **մեթոդաբանության** հիման վրա և ունի տեսագործնական մեծ նշանակություն: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ վերականգնողական հաստատություններում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության և համադրման հիման վրա տեղի է ունեցել մանկավարժական պայմանների վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնում, ինչը հնարավորություն է տվել մշակել տեսական հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և համալրել լոգոպեդական տեսական փորձը նոր գիտահետազոտական փաստերով:

Առավել խոստումնալից է հետազոտության **գործնական նշանակությունը**: Այն հնարավորություն է տվել լոգոպեդական վաղ միջամտության մոդելի համալիր ծրագրի միջոցով բարձրացնել ԱՄԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության արդյունավետությունը՝ նաև վերականգնողական կենտրոններում, իսկ առաջարկված գործնական և ծրագրային նյութերը կիրառելու նախադպրոցական տարիքի ԱՄԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական միջամտության գործընթացում՝ վաղ տարիքից: Հետազոտության նյութերը կարող են կիրառվել նաև մանկավարժական բուհերում սովորող ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքում, լոգոպեդների որակավորման բարձրացման համակարգում, հետագա գիտական այնպիսի հետազոտություններում, որոնք ուղղված են աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության գործընթացի կազմակերպման ուսումնասիրմանը:

Այսպիսով՝ Բ.Ա. Խառատյանը հետազոտության օբյեկտ համարելով ԱՄԽ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մոդելի կիրառման գործընթացը՝ խորը վերլուծություններ է կատարել

մասնագիտական, գիտամանկավարժական՝ հայրենական ու համաշխարհային գրականության շրջանակներում:

**Հետազոտության առաջին գլխում** նա փորձել է ցույց տալ զարգացման այս լայն սպեկտրի խանգարման հիմնական և ընդհանուր պատճառներն ու ախտանշանները, որոնք միաժամանակ կարող են ունենալ հոգեբանամանկավարժական ախտորոշման և գնահատման նշանակություն: Կատարված հետազոտության մեջ կարևորում ենք այն, որ Ք. Խառատյանը անդրադառնում է **ճանաչողական ունակությունների խանգարումների ազդեցությամբ ի հայտ եկող աուտիզմի դրսևորումներին՝ (Sergio R. PeñaLoza) տալով դրանց արտահայտման ձևերը:** Ըստ մեզ՝ հենց այսպիսի հարաչափերի հաշվառման բացակայությունն է, որ ընկած է աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների լոգոպեդական աջակցության մոդելների ստեղծման անհրաժեշտության հիմքում:

Չնայած նրան, որ ՀՀ-ում ներկայումս ԱՍԽ ունեցող երեխաների ախտորոշման նպատակով իրականացված հետազոտությունների վերաբերյալ հստակ վիճակագրական տվյալներ չկան՝ այնուամենայնիվ կատարված ուսումնասիրությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է ներկայացնել վիճակագրական տվյալներ՝ «Սրբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի «Մանկական հոգեբուժական դիսպանսեր»-ի և «Արաբկիր» բժշկական համալիր՝ երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնի տվյալների բազայից՝ ներկայացնելով 2007-2018 թթ. հաշվառված՝ աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հետազոտության տվյալներն ըստ՝ ընդհանուր թվի և տարեթվերի: Հիմնախնդրի տեսական դրվածքի վերլուծության ճանապարհով Ք.Ա Խառատյանը կարողացել է դուրս բերել այս կազմի երեխաների հոգեբանամանկավարժական բնութագրերի և գնահատման գործընթացների համար կարևոր գործիք, որում ներկայացրել է բնականոն զարգացում և աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունների համեմատական բնութագիրը՝ 3-24 ամսականի տարիքային շեմի կտրվածքով (էջ 29-41): Արժեքավոր ենք համարում հատկապես այն, որ մանրամասն վերլուծելով այս կազմի երեխաների հետ կիրառվող տեխնիկաների և մոտեցումների համակարգը՝ ատենախոսը ոչ միայն դուրս է բերել այն մեթոդները, որոնք առավել հաճախ են կիրառվում լոգոպեդական աջակցության գործընթացներում, այլև տվել է դրանց կիրառական նշանակության գիտատեսական հիմնավորումը. օրինակ՝ «Կոգնիտիվ-վարքաբանական թերապիա (CBT)», «Հակազդման հիմունքների ուսուցման (PRT)»

մեթոդը և այլն: Ատենախոսական աշխատանքի վերլուծությունը ցույց է տվել, որ հատկապես վերականգնողական կենտրոններում իրականացվող լոգոպեդական աջակցության բովանդակության և դրվածքի հետազոտությունն է, որ բարձրացնում է կատարված աշխատանքի տեսագործնական նշանակությունը, քանի որ հենց այս բաժնում է, որ պարզ երևում է հավաքագրված տեսական փաստերի կիրառական <<իրական>> խոչընդոտները, հեռանկարներն ու լոգոպեդական միջամտության վաղ մոդելի ներդրման հրատապությունը: <<Նշված տեսական մոտեցումներն առանձնակի դեր ունեն ԱՄԽ-ի հաղթահարման վաղ մասնագիտական միջամտության տարբեր մեթոդիկաներում: Նեղ մասնագիտական մեթոդական ընտրությունը որքան էլ կրում է լոկալ բնույթ, այնուամենայնիվ, այն նույնպես պետք է իրականացվի թիմային սկզբունքով>>,-գրել է ատենախոսը (էջ 60):

Սույն հարցին առնչվող հետազոտությունները անց են կացվել 2017-2018թթ վերականգնողական կենտրոնի լոգոպեդական ծառայությունից օգտված 0-3 տարեկան ԱՄԽ բժշկական ախտորոշումն ունեցող 16 երեխայի շրջանում՝ 4 խմբով: Խմբերից յուրաքանչյուրը ներառել է չորս երեխա, իսկ մասնագիտական վաղ միջամտության համար ընտրվել է 4 մեթոդ՝ «ABA», «Աֆֆոլտերի մեթոդ», «Խաղային թերապիա», «Մեթոդների համալիր կիրառություն» (աղյուսակ 8): Այստեղ հատկապես կարևորում ենք այն, որ Ք. Խառատյանը կարողացել է հիմնավորել նշված մեթոդների ընտրությունը: Ըստ ատենախոսի՝ 9 ամսվա փորձարարական գործունեության ընթացքում դրական փոփոխություն է հաստատվել և արձանագրվել խոսքի ընկալման և վերարտադրման տեսանկյունից՝ բոլոր խմբերում, սակայն ամենաբարձր արդյունավետությունը գրանցվել է է 4-րդ խմբի երեխաների շրջանում, երբ մեթոդների ընտրությունն ու կիրառումը պարբերաբար փոփոխվել է՝ ելնելով երեխայի, տվյալ պահին ունեցած զարգացման մակարդակից: Ք.Ա. Խառատյանը ցույց է տվել, որ սկզբնական փուլերում առաջնային գնահատման արդյունքում ընտված մեթոդը, որքան էլ, որ համապատասխանում է երեխայի զարգացման առանձնահատկություններին և ապահովում արդյունավետ սկիզբ, այնուամենայնիվ, մեթոդիկաների և մեթոդների զուգակցված կիրառման բացակայության պայմաններում կատարված աշխատանքի արդյունավետությունը ցածր է լինում: Ուստի նա հավաստում է, որ ԱՄԽ ունեցող երեխաների հետ տարվող լոգոպեդական աշխատանքում կիրառվող բոլոր մեթոդներն էլ արդյունավետ են, սակայն հարկավոր է դրանք ցուցաբերվող միջամտության կոնկրետ փուլում համադրել և զուգակցել՝ հաշվի առնելելով երեխայի զարգացման անհատական մոտեցման պահանջն ու մակարդակը:

**Հետազոտության երկրորդ գլխում ներկայացված է** աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտությանն ուղղված հետազոտության վերլուծության արդյունքները, որտեղ ատենախոսը հստակ նկարագրել է գիտահետազոտական աշխատանքի ընթացքը և մեթոդները: Երևում է, որ նա կիրառել է մետասինթեզի և մետաանալիզի մեթոդները, որոնցով վեր է հանել այն հիմնական հիմնահարցերը, որոնք որոշիչ են դարձել հետազոտվող հիմնախնդրի ուղղվածության մշակման համար. նկատվում է, որ ատենախոսն օգտվել է հոգեբանամանկավարժական և սոցիալոգիական մեթոդների համդրման մոտեցումից, որն իրականացված հետազոտությունը առավել համապարփակ է դարձրել: Բ.Ա. Խառատյանը կատարել է լոգոպեդների և մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների՝ մեթոդների վերաբերյալ տեղեկացվածության տվյալների համեմատական խորը վերլուծություն, որը հաստատել է, որ լոգոպեդների 59%-ը իր աշխատանքում օգտագործում է մեկ մեթոդ, իսկ մի քանի մեթոդների համադրություն կիրառում է լոգոպեդների 41%-ը:

Ծնողների ներգրավմամբ իրականացվող թիմային աշխատանքի իրականացման վերլուծության արդյունքում ատենախոսը հաստատել է, որ ծնողավարման աշխատանքերը խիստ թերանում են՝ մի բան, որ անշուշտ բացասաբար է անդրադառնում աուտիզմի սպեկտր ունեցող երեխաների հետ տարվող թիմային աշխատանքի արդյունավետության վրա: Արժանահիշատակ ենք համարում, որ ատենախոսը ցուցանիշներ է ներկայացրել հոգեբանամանկավարժական ծառայությունների դիմելիության և մատուցման համեմատական վերլուծության արդյունքում՝ ըստ «ԱրԲԵՍ» ԱԿ-ի կողմից տրամադրված 2012-2013թթ. և 2019-2020 թթ. տվյալների: Ցույց է տվել աուտիզմի վաղ ախտորոշման մի շարք մեթոդիկաների կիրառման փաստերը:

Ատենախոսը եզրակացրել է, որ մեր երկրում աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաներին ուղղված լոգոպեդական վաղ միջամտության համակարգը դեռևս կայացած չէ: Ըստ նրա՝ հետազոտության արդյունքում գրանցված անհամեմատ ցածր ցուցանիշը, որը գրանվցվել է Հայաստանում, խնդրի իրազեկման վերաբերյալ հիմնահարցերից բացի, պայմանավորված է նաև որոշակի կարծրատիպերով: Այս երևույթը ատենախոսը ապացուցել է այս համակազմի երեխաների՝ մասնագիտացված կենտրոններ և, հատկապես, լոգոպեդին ուշ դիմելիության վիճակագրական հետազոտության արդյունքերով, որոնք ամփոփված են ԱՍԽ ունեցող երեխաների սեռային պատկանելիության վիճակագրական տվյալներում:

Այսպիսով՝ ատենախոսը եզրակցել է, որ մասնագետների մեծամասնությունը, ունենալով թիմային աշխատանքի և մեթոդական համալիր միջամտության կողմնորոշում, այնուամենայնիվ, ԱՍԽ ունեցող երեխաների հետ լոգոպեդական աշխատանքը իրականացնում են հիմնականում թիմային աշխատանքներից անկախ՝ անհատական պարապմունքների ձևաչափով: Նա հաստատել է, որ լոգոպեդները առանձին մեթոդներ ընտրում են սեփական հայեցողությամբ, հաշվի չեն առնում երեխայի տարիքային զարգացման և անհատական առանձնահատկությունները, բավարար որակով չեն համագործակցում երեխայի հետ աշխատող մյուս մասնագետների հետ, իսկ ծնողավարությունը ձևական բնույթ է կրում:

**Հետազոտական աշխատանքի երրորդ գլուխը, որը նվիրված է աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրությանը, հագեցած է մասնագիտական հարուստ փորձի ընդհանրացումներով: Ք. Ա. Խառատյանը մանկավարժական փորձարարությամբ հիմնավորել է ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մեթոդների և միջոցների արդյունավետությունը՝ աուտիզմի սպեկտրի համախտանիշ ունեցող երեխաների մինչխոսքային և խոսքային հաղորդակցման, էքսպրեսիվ և իմպրեսիվ խոսքի խթանման և զարգացման տեսանկյունից: Դրանցում հստակ նկարագրել է այն քայլերը, որոնք հարկավոր են վերոնշյալ գործընթացների կազմակերպման համար: Բարձր ենք գնահատում այն հանագամանքը, որ ատենախոսը լոգոպեդական վերականգնողական ներազդեցության գործընթացի կառուցման ընթացքում հետևել է որոշակի սկզբունքների և ներկայացրել այն մեթոդաբանական հաջորդականությունը, որն ընկած է լոգոպեդական աջակցության հիմքում: Ատենախոսը վերլուծելով ուսումնական/լոգոպեդական ծրագրի սկզբնական ուղեցույցը, որտեղ առանձնացված են առաջնային հմտությունները՝ տվել է աշխատանքների կազմակերպման օրինակելի ծրագիր: Ք. Ա. Խառատյանին հաջողվել է բարդ համակցված մեթոդների կիրառման գործընթացում ցույց տալ այն առանցքային մոտեցումները, որոնք կիրառվող բոլոր մեթոդիկաները միմյանց հետ համատեղելու և համադրելու հնարավորություն են տալիս: Դրանցում առավել բարդ մի խնդրի լուծում է առաջարկել՝ տալով հստակ չափորոշիչներ տվյալ մեթոդը գործածության մեջ դնելու ժամանակի, անհրաժեշտության և այլ չափանիշների վերաբերյալ. Օրինակ՝ ««Աֆֆոլտերի» մեթոդի կիրառությունը լոգոպեդական տեսանկյունից իրականացնում ենք երեխայի զարգացման այն փուլում, երբ սկսում են գերակշռել երեխայի զգայական դժվարությունները՝ խանգարելով նրա հետագա զարգացմանը»,- ատենախոսության 105-րդ էջում նշել է հեղինակը:**

Այսպիսով՝ Բ.Ա. Խառատյանը առաջարկելով «Ուսումնական ծրագրի ուղեցույցներ»-ի փուլային գործադրման մոտեցում՝ ցույց է տվել, որ վերականգնողական կենտրոններում կազմակերպվող լոգոպեդական աշխատանքների ծրագրում, հատկապես առանցքային համարվող, ծնողների դերն ու մասնակցությունը, ինչպես նաև համալիր մեթոդների կիրառումը հնարավոր է դառնում: Նա մանկավարժական փորձարարության ճանապարհով հիմնավորել է համալիր մեթոդների արդյունավտությունը՝ աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության գործում:

Կարծում ենք, որ ներկայացված գիտահետազոտական աշխատանքը կարելի է համարել <<Աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող 0-6 տարեկան երեխաներին ցուցաբերվող լոգոպեդական վաղ միջամտության փուլային զարգացման տեսություն>>:

Չնայած վերոհիշյալի՝ աշխատանքը զերծ չէ որոշ բացթողումներից և անճշտություններից, որոնք մենք ներկայացրել ենք **դիտողությունների ձևով**:

1. Ճիշտ չենք համարում <<Բովանդակություն>> բաժնի վերնագրերում եզրույթները, հասկացությունները կամ զարգացման խանգարման տեսակները հապավումներով բնորոշելու փաստը. օրինակ՝ <<Լոգոպեդական վաղ միջամտության հետազոտության արդյունքների վերլուծությունը ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում>> (տես՝ 2.2-ի վերնագիր): Նմանատիպ մոտեցում նկատվում է թե՛ երկրորդ, թե՛ երրորդ գլխում:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ա) ատենախոսը երկարատև աշխատանքային փորձ ունի բ) հետազոտության խնդրո առարկան՝ իր բովանդակությամբ հոգեբանամանկավարժական հիմնահարց է գ) հետազոտությունների ընթացքը կարող էր տևական լինել, կարծում ենք՝ սույն հետազոտության խնդիրների լուծման նպատակով ընտրված մեթոդների շարքում <<Հետազոտության լոնգիթյուդինալ մեթոդի>> ներառումը միանգամայն տրամաբանական կլիներ:
3. Ըստ մեզ՝ աշխատանքի տեսագործնական արժեքն առավել կբարձրանար, եթե հետազոտության մեթոդաբանական հիմքերում դրված լիներ նաև Տ.Պիտերսի մեթոդիկան, որը հարուստ տեսագործնական դրույթներ է պարունակում՝ նվիրված աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման մանկավարժական պայմանների, ժամանակի և տարածության պլանավորմանն ու մոդելավորմանը. **Питерс Т.**




<<Аутизм: от теоретического понимания к педагогическому воздействию.- М.: Гуманит.изд. центр ВЛАДОС, 2003.- 240 с. >>.

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրիստինա Արսենի Խառատյանի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքն ունի ատենախոսական աշխատանքի պահանջներին համապատասխանող գիտական կառուցվածք: Ներկայացված տեսագործական նյութը ձևակերպված է պատշաճ մասնագիտական լեզվով, որը համապատասխանում է ատենախոսական աշխատանքի շարադրման պահանջներին: Ներկայացված մեթոդաբանությունը, որն արտացոլված է գրականության ցանկում, լիովին արտացոլում է հետազոտված հիմնախնդիրը, իսկ հավելվածում տեղ գտած նյութերը մատնանշում են հետազոտության հիմքերը և գործնական ուղղվածությունը: Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսությունը համապատասխանում են, իսկ պաշտպանության ներկայացված դրույթներն արտացոլված են Ք.Ա. Խառատյանի կողմից հրատարակված հոդվածներում: Այն ավարտուն և ինքնուրույն հետազոտություն է, որից երևում են ատենախոսի մասնագիտական գիտելիքների, գործնական պատրաստվածության մակարդակը, ինչպես նաև համակարգված մտածողությունը և ոլորտի հիմնախնդիրներին հաղորդակից լինելու փաստը: Այսպիսով, ելնելով ներկայացված հետազոտության արդիականությունից, նպատակից, խնդիրներից, վարկածից, պաշտպանության ներկայացվող դրույթներից և նրանից, որ առաջին անգամ <<- ում սահմանվել են աուտիզմի սպեկտրի խանգարումեր ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման հիմնական ուղղությունները, բնույթը, բովանդակությունը և մշակվել է աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել, որը ներառում է աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր՝ հաստատում ենք, որ Ք.Ա. Խառատյանի <<Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում>> թեմայով ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից՝ ԺԳ.00.03 <<Հատուկ մանկավարժություն>> (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսությանը ներկայացվող 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանին:


Պաշտոնական ընդդիմախոս  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ



Լ. Զ. ՍԱՐԿՏԻԿՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոս  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Լ. Զ. Սարատիկյանի ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար  
Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ



Ս. Ս. ԻՍԿՐԻՅԱՆ

11.04.2023 թ.